

## ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS <sup>4</sup>	NKJV	NRSV	TEV	NJB
Հորդորներ  (3:17-4:1)	Եղեր միաբան, ուրախ և աղոթքի մեջ  (3:17-4:1)	Վերջին խնդրանքներ  (3:17-4:1)	Խրատներ  4:1	Վերջին խորհուրդ  (3:17-4:1)
4:2-7	4:2-7	4:2-3  4:4-7	4:2-3  4:4  4:5-7	4:2-3  4:4-9
4:8-9	4:8-9	4:8-9	4:8-9	
Փիլիպպեցիներից ընծայի ընդունում	Փիլիպպեցիների առատաձեռնությունը		Շնորհակալություն ընծայի համար  4:10-13  4:14-20	Շնորհակալություն ընդունված օգնության համար 4:10-20
4:10-14	4:10-20	4:10-14		
4:15-20		4:15-20		
Վերջին ողջույններ	Ողջույններ և օրհնություն		Վերջին ողջույններ	Ողջույններ և բարեմաղթանքներ
4:21-23	4:21-23	4:21-22  4:23	4:21-22  4:23	4:21-22  4:23

#### **ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)** ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:1

**<sup>1</sup>Ուստի, իմ շատ սիրելի և կարոտալի եղբայրներ, իմ ուրախությունն ու պսակը, այսպես հաստատուն մնացեք Տիրոջով, սիրելիներս:**

**4:1 «իմ շատ սիրելի եղբայրներ»** Պողոսը համադրել է հավատացյալների համար ՆԿ-յան երկու տիպիկ տերմիններ՝ «սիրելի» /երկու անգամ/ և «եղբայրներ»: Այս սիրառատ համադրությունը ցույց էր տալիս նրա մեծ սերը այս եկեղեցու հանդեպ, ինչպես որ երևում է հաջորդ արտահայտության մեջ և Փիլ. 1:8 համազոր խոսքում:

❖ **«կարոտալի /որոնց փափագում եմ տեսնել/»** Այս նույն ուժեղ տերմինը (*epiphotheō*) նաև կիրառվում է Փիլ. 1:8, 2:26, 2 Կորնթ. 9:14-ում:

❖ **«իմ ուրախությունն ու պսակը»** «Պսակ» տերմինը (*stephanos*) նշանակում է մարզական մրցության մեջ հաղթողի պսակ: Այս նույն ճոխությունը կարելի է տեսնել Մակեդոնական մեկ այլ եկեղեցու ուղղված Պողոսի մեկնություններում (տես՝ 1 Թեսաղ. 2:19-20, 3:9): Այս եկեղեցին Պողոսի արդյունավետ առաքելության ապացույցն էր (տես՝ 1 Կորնթ. 9:2, 1 Թեսաղ. 2:19):

❖ **«հաստատուն մնացեք»** Սա ներկա ներգործական հրամայական է: Ռազմական այս փոխաբերությունը վերաբերում է խնդիրների մեջ Քրիստոնյայի հավատարիմ մնալու կարողությանը (տես՝ Փիլ. 1:27, 1 Կորնթ. 16:13, Եփես. 6:11-14): Այն նաև կապ ունի հաստատակամության հետ (տես՝ Հատուկ Թեմա Փիլ. 1:9-11-ում), որը միայն հնարավոր է «Տիրոջով» (տես՝ Գաղ. 6:9, Հայտ. 2:7, 11, 17, 26, 3:5, 12, 21):

Սա ևս մեկ աստվածաշնչյան պարադոքս է Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև կապի (համեմատե՛ք Եզեկ. 18:31-ը Եզեկ. 36:26-27-ի հետ): Այս համարում հավատացյալներին պատվիրվում է «հաստատ կանգնել», մինչ Հուդա 1:24-ում Աստված Ինքն է նրանց հաստատուն կանգնած պահում: Ինչ-որ առումով երկուսն էլ ճիշտ են:

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:2-3

**<sup>2</sup>Ես աղաչում եմ Եփոզիային և աղաչում եմ Սյունտիքին, որ միևնույն մտքի լինեն Տիրոջով: <sup>3</sup>Քեզ էլ եմ խնդրում, իմ ճշմարիտ լծակից, օգնի՛ր այս կանանց, որ ինձ հետ աշխատեցին ավետարանի մեջ՝ Կղեմեսի և իմ այլ գործակիցների հետ, որոնց անունները Կյանքի Գրքի մեջ են:**

**4:2 «Եփոզիա . . . Սյունտիք»** Ըստ էության, անգամ այս սիրառատ եկեղեցում միևնույն է կա ներքին լարվածություն: Սա չի վերաբերում վարդապետական լարվածությանը, որը նշվում է 3-րդ գլխում, այլ մի տեսակ լարվածություն փոխհարաբերությունների մեջ: Այս առաջին հատուկ անունը նշանակում է «հաջող ճամփորդություն կամ հաջողություն»: Երկրորդ անունը նշանակում է «հանելի ծանոթություն» կամ «բարի բախտ»: Նրանց անունները չէին համապատասխանում իրենց այդ օրերի գործողությունների հետ: Մակեդոնիայում կանայք ավելի շատ ազատություն ունեին, քան Հռոմեական Կայսրության մեջ որևէ այլ տեղ (տես՝ Գործք 16:12-15): Երբեմն ազատությունը փոխակերպվում է անձնական նախասիրության կամ նույնիսկ արտոնության:

❖ **«միևնույն մտքի /ներդաշնակության մեջ/ լինեն Տիրոջով»** Ներդաշնակության համար կարևոր հանգամանքը Քրիստոսի հետ փոխհարաբերությունն է, որը արմատապես փոխում է նրանց հարաբերությունները ուխտի մեջ եղող իրենց եղբայրների և քույրերի հետ: Հավատացյալների սերն Աստծո հանդեպ հստակ երևում է մեկը մյուսի հանդեպ իրենց ցուցաբերած սիրո միջոցով (տես՝ Եփես. 4:1-6, 2:1-5, 1 Հովհ. 4:20-21):

4:3  
NASB, NKJV  
NRSV  
TEV  
NJB

«ճմարիտ ընկեր»  
«անձնվեր գործընկեր»  
«հավատարիմ գործընկեր»  
«գործընկեր»

Սա հաճախ բառացի թարգմանվում է որպես «լծակից» (տես՝ Արնդ և Գինգրիչի *Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն բառապաշար*, էջ՝ 783 /Arndt and Gingrich, *A Greek-English Lexicon of the New Testament*): Ամեն դեպքում սա արական սեռի եզակի թվով գոյական է, որը հավանաբար այսքան շատ այլ անունների ցանկում նույնպես հատուկ անուն էր՝ Սիզիգուս (տես՝ NJB, և Սուլթն և Միլիգան, *Հունարեն Կտակարանի Բառարան*, էջ՝ 607), որը պետք է որ լիներ անվան հետ կապված բառախաղ:

Հնարավոր է, որ սրանով Պողոսը նկատի ուներ Ղուկասին: Գործքում «մենք» բաժինները սկսվում և ավարտվում են Փիլիպպեում: Հնարավոր է, որ Ղուկասը մնացել է այնտեղ, որպեսզի օգնի նորադարձներին և Երուսաղեմի եկեղեցու համար նվիրատվություն հավաքի:

❖ «**օգնի՛ր այս կանանց**» Սա ներկա չեզոք հրամայական է, որը բառացի նշանակում է «գրադվիր»: Պողոսը Փիլիպպեի եկեղեցու անդամներից մեկին հորդորում է օգնել այս երկու կանանց հաղթահարելու Տիրոջ մեջ ունեցած իրենց տարբերությունները (տես՝ Գաղ. 6:1-4):

NASB  
NKJV  
NRSV  
TEV  
NJB

«որ իմ դժվարությունը կիսեցին ավետարանի համար»  
«ինձ հետ աշխատեցին»  
«պայքարեցին իմ կողքին»  
«ինձ հետ միասին շատ են աշխատել»  
«շատ են պայքարել»

Այս տերմինը օգտագործվել է միայն այստեղ և Փիլ. 1:27-ում: Սա ռազմական կամ մարզական տերմին է «թեժ պայքարի» համար: Այն կիրառվում է փոխաբերական իմաստով, ավետարանի ուժգին՝ թեժ գործի համար: Այս կանայք օգնել էին Պողոսին իր ավետարանական առաքելության գործում: Հռոմեացիների 16-րդ գլխում նշված Պողոսի օգնականներից շատերը կանայք էին: Անգամ միսիոներները ունենում են անհամաձայնություններ (տես՝ Գործք 15:36-41): Հարցը և վկայությունը նրանում է, թե ինչպես են նրանք լուծում դրանք որպես Թրիստոնյաներ:

❖ «**Կղեմես**» Սա Հռոմեական աշխարհում տարածված անուն էր: Այս անձը ոչ մի այլ տեղ չի նշվում ՆԿ-ում: Սակայն Ալեքսանդրիացի Ռոզինետը, Եվսեբիոսը և Ջերոմը հավատում էին, որ այստեղ խոսվում է Կղեմես Հռոմի Պապի մասին, որը մի նամակ է գրել Կորնթոսի եկեղեցուն՝ առաջին դարի վերջերում (մ. թ. 95): Սակայն այս նույնականացումը մեծապես կասկածելի է թվում:

❖ «**և իմ այլ գործակիցների հետ**» Պողոսը կամենում էր ունենալ շատ օգնականներ ավետարանի գործի մեջ: Նա «պրիմադոննա» չէր. ըստ երևույթին նա այլ տղամարդկանց և կանանց նույնպես պատասխանատվությամբ էր լիազորել: Հետաքրքիր է նկատել, թե ինչքան կանանց անուններ են նշվում Հռոմեացիների 16-րդ գլխում որպես Պողոս Առաքյալի կին օգնականներ:

❖ «**որոնց անունները Կյանքի Գրքի մեջ են**» Հնարավոր է, որ այստեղ նկատի ունենա ուխտի ժողովրդի ՀԿ-յան մարդահամարը (տես՝ 2 Օր. 7:10, 12:1), որը այլաբանորեն վերաբերում է Աստծո հիշատակարանին: Սրանք երկու գրքեր են, որոնց մասին նշվում է Դան. 7:10 և Հայտն. 20:12-15-ում՝ (1) հիշատակի գիրքը և (2) կյանքի գիրքը: Հիշատակարանը ներառում է թե՛ փրկված և թե՛ կորսված մարդկանց անուններն ու նրանց գործերը (տես՝ Մաղմ. 58:6, 139:16, Ես. 65:6, Մաղ. 3:16): Կյանքի գիրքը բովանդակում է փրկվածների անունները և կարելի է տեսնել Ելից 32:32, Մաղմ. 69:28, Ես. 4:3, Դան. 12:1, Ղուկ. 10:20, Փիլ. 4:3, Եբր. 12:23, Հայտն. 3:5, 13:8, 17:8, 20:12,15, 21:27-ում: Աստված ճանաչում են այն մարդկանց, որոնք Իրեն են պատկանում: Նա վարձատրելու է իր հետևորդներին

և դատելու՝ անբարիշտներին (տես՝ Մատթ. 25:31-46, Հայտն. 20:11-15): Հունահռոմեական աշխարհում այս տերմինը վերաբերում էր քաղաքի պաշտոնական մարդահամարին, և եթե այդպես է, այն պետք է որ լիներ մեկ այլ բառախաղ կապված այս քաղաքի հռոմեական գաղութ լինելու պաշտոնական կարգավիճակի հետ (տես՝ Փիլ. 1:27, 3:20):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:4-7**

**<sup>4</sup>Միշտ ուրախ եղեք Տիրոջով, նորից եմ ասում՝ ուրախ եղեք: <sup>5</sup>Թող ձեր հեգույթունը հայտնի լինի բոլոր մարդկանց: Տերը մոտ է: <sup>6</sup>Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն: <sup>7</sup>Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է, պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով:**

**4:4** Փիլ. 4:4-ում «ուրախանալ» տերմինի համար երկու ներկա ներգործական հրամայական ձև կա: Այս տերմինը կարող է թարգմանվել որպես բարեմաղթանք, սակայն այս համատեքստում այն պետք է որ թարգմանվի «ուրախանալ» (տես՝ 1 Թեսաղ. 5:16): Սա Փիլիպպեցիների թղթում գլխավոր թեմա է: Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է օգտագործվում «ամեն» և «բոլոր» տերմինները Փիլ. 4:4-13 համարներում, ինչպես Փիլ. 1:1-8-ում էր: Ուրախությունը չպետք է կապված լինի հանգամանքների հետ: Կարևոր հանգամանքը Քրիստոսի հետ հավատացյալների փոխհարաբերությունն է («Տիրոջով»):

**4:5**

**NASB**

**NKJV, NRSV**

**TEV**

**NJB**

**«հեզ հոգին»**

**«հեգույթունը»**

**«հեզ վերաբերմունքը»**

**«բարի զգացողությունը»**

Քրիստոնեական ապրելակերպի այս կոչը սկսում է Փիլ. 3:1-ում, սակայն սուտ վարդապետների վերաբերյալ քննարկումը Պողոսի միտքը շեղում է այս թեմայից, իսկ այստեղ նա նորոգում է շեշտադրումը: Տերմինն ինքնին լավագույնս թարգմանվում է որպես «բարեհամբույր», «հեզ» կամ «զիջող» (տես՝ 1 Տիմ. 3:3, Տիտոս 3:2, Հակ. 3:17, 1 պետ. 2:18):

❖ **«հայտնի լինի բոլոր մարդկանց»** Այս համարը երկու կերպ է մեկնաբանվել՝

1. հավատացյալները պետք է հեգույթամբ վարվեն մյուս հավատացյալների հետ, որպեսզի եկեղեցուց դուրս գտնվող մարդիկ տեսնեն և դա նրանց շահի Քրիստոսի համար (տես՝ Մատթ. 5:16):
2. այս հեգույթունը պետք է ցուցաբերվի բոլոր մարդկանց հանդեպ, անկախ Քրիստոսի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունից, որպես Նրա գործության վկայություն՝ ապացույց այս հեթանոս նորադարձների կյանքերում և որպես անհավատների կողմից անարդար քննադատության խթան՝ կանխարգելիչ (տես՝ Հռոմ. 12:17, 14:18, 2 Կորնթ. 8:21, 1 Պետ. 2:12,15, 3:16):

**NASB, NRSV, NJB**

**NKJV**

**TEV**

**«Տերը մոտ է»**

**«Տերը գալիս է»**

**«Տերը շուտով գալիս է»**

Այս «մոտ» բառը կիրառված է ժամանակի համար (տես՝ Մատթ. 24:32,33): Երկրորդ Գալուստր Փիլիպպեցիների թղթում կրկնվող թեմա է: Սա Արամեերենի *մարանաթա* բառի նշանակությամբ շատ նման իմաստ ունի (տես՝ 1 Կորնթ. 16:22, Հայտն. 22:10): Երկրորդ Գալատյան ցանկացած պահի ակնկալությունը եղել է և մնում է Քրիստոնեական կյանքի քաջալերությունը՝ սփոփանքը (տես՝ Հռոմ. 13:12, Հակ. 5:8-9):

Հնարավոր է, որ սա նաև վերաբերում է Տիրոջ հավատացյալների հետ ամեն պահի ներկա գտնվելու իրողությանը (տես՝ Մատթ. 28:20, Հռոմ. 10:8 և Ֆ. Ֆ. Բոյուսի *Հարցերի պատասխաններ*, էջ՝ 201):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԱՆԱԹԱ**  
**SPECIAL TOPIC: MATANATHA**

Սա արամերեն արտահայտություն է, որն արտացոլում է վաղ պաղեստինյան եկեղեցու աստվածաբանական դավանաբանական հիմնավորում՝ (1) Հիսուսի աստվածության մասին (Մաղմուս 110) կամ (2) Հիսուսի Երկրորդ Գալստյան մասին (Գործք 3:19-21): Այս բառի նշանակությունը կախված է նրանից, թե ինչպես են այն բաղդատում՝

1. «Մեր Տերը, արի՛» (այսինքն՝ *marana-tha*), ունի Հայտն. 22:20-ում միևնույն հրամայական արտահայտության նշանակությունը: Հետևաբար թարգմանություններից մեծ մասը 1 Կորնթ. 16:22-ում ենթադրում է այդ իմաստը: Եթե այդպես է, ապա դա աղոթք է Հիսուսի վերադարձի համար:
2. «Մեր Տերը եկել է» (այսինքն՝ *maran-atha*) կլինի արամերեն լեզվի ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակը: Սա այն թարգմանությունն է, որը նախընտրում էր Ոսկերեքանը (մ.թ. 345-407թթ), որը խոսում է Հիսուսի Մարմնավորման մասին:
3. «Մեր Տերը գալիս է» խոսքը արտացոլում է եբրայերեն ՄԱՐԳԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՅԱԼ, որը շատերի կողմից կիրառվում է Քրիստոնեական ծառայության շարժառիթ ունենալու համար: Երկրորդ Գալուստր միշտ եղել է բոլոր դարերի հավատացյալների համար որպես քաջալերություն:
4. Դիդարք 10:6 (գրված առաջին դարի վերջում կամ երկրորդ դարում) կիրառում է այս նույն արտահայտությունը Տերունական Ընթրիքի համատեքստում, որտեղ թե՛ Հիսուսի այդ պահին այնտեղ ներկա գտնվելը և թե՛ ապագայի էսկատոլոգիական (վախճանաբանական) գալուստր աղոթքներում շեշտադրվում են:

**4:6 «Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք»** Սա ներկա ներգործական հրամայական է: Փիլիպպեում եկեղեցին մեծ ճնշումների տակ էր՝ թե՛ ներսից, և թե՛ դրսից: Անհանգստությունը Քրիստոնեական կյանքին ոչ համահունչ հատկություն է (տես՝ Մատթ. 6:25-34 և 1 Պետ. 5:7): Հավանաբար իրենց Տիրոջ մեջ հաստատուն մնալուց և Նրան ծառայելուց բացի ոչինչ չպետք է անհանգստացնի հավատացյալներին: Խաղաղության ամենամեծ թշնամին անհանգստությունն է:

❖ **«այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ»** Գոհության հետ միախառնված աղոթք մեր և ուրիշների համար. սա անհանգստությանը տված կարևորագույն պատասխանն է: Հետաքրքիր է, թե ինչքան հաճախ է Պողոսը օգտագործում «գոհություն» տերմինը աղոթքի հետ համադրելով (տես՝ Եփես. 5:20, Կող. 4:2, 1 Թեսաղ. 5:17-18, 1 Տիմ. 2:1): Ակնհայտ հակադրություն կա «ոչ մի բանի» և «ամեն բանում» խոսքերի մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի փառաբանությունը, աղոթքը և գոհությունը, Եփես. 3:20-ում:

❖ **«ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն»** Սա ներկա կրավորական հրամայական է: ՆԿ-ում կան մի քանի հատվածներ, որոնք շեշտադրում են, որ հավատացյալները պետք է հարատևեն աղոթքի մեջ (տես՝ Մատթ. 7:7-11, Ղուկ. 18:2-8): Հավանաբար գոհությունը և հարատևությունը աղոթքի ճիշտ աստվածաբանության մեջ բացակայող երկու տարրերն են: Աստված գիտի, թե ինչի կարիք ունենք, սակայն Նա փոխհարաբերություն և վստահություն է ցանկանում աղոթքի մեջ: Աստված Իրեն սահմանափակել է շատ ոլորտներում Իր գավակների աղոթքների համար՝ «Չունենք, քանի որ չենք խնդրում» (տես՝ Հակոբոս 4:2):

**4:7 «Աստծո խաղաղությունը»** Հետաքրքիր է, որ այս համատեքստում Աստծո խաղաղությունը նշված է Փիլ. 4:7-ում, իսկ Աստված, ով տալիս է այդ խաղաղությունը՝ նշված է Փիլ. 4:9-ում: Առաջինը շեշտադրում է, թե ինչ է տալիս Աստված, իսկ երկրորդը՝ Նրա բնավորությունը: Խաղաղությունը ՆԿ-ում կիրառվում է մի քանի տարբեր իմաստով՝

1. այն կարող է լինել տիտղոս՝ անուն (տես՝ Ես. 9:6, Հռոմ. 15:33, 16:20, 2 Կորնթ. 13:11, Փիլ. 4:9, 1 Թեսաղ. 5:23, 2 Թեսաղ. 3:16)
2. կարող է վերաբերել ավետարանի խաղաղությանը՝ օբյեկտիվ իմաստով (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Կող. 1:20)
3. կարող է վերաբերել ավետարանի խաղաղությանը՝ սուբյեկտիվ իմաստով (տես՝ Եփես. 2:14-17, Կող. 3:15)

Երբեմն 2 և 3 կետերը միաձուլվում են ինչպես Հռոմ. 5:1-ում: Տե՛ս Հատուկ Թեմա. Խաղաղություն, Կող. 1:20-ում:

❖ **«որ ամեն հասկացողությունից վեր /գերազանց/ է»** Սա ներկա ներգործական դերբայ է: Այն մեկնաբանվել է երկու կերպ՝ (1) Աստծո խաղաղությունն ավելի լավ է, քան մարդկային հասկացողությունը, կամ էլ (2) Աստծո խաղաղությունը ավելի բարձր է մարդկային հասկացողությունից: Եփես. 3:20-ում գտնվող գուգահեռ հատվածը օգտակար է: Աստծո ճանապարհները մեր ճանապարհներից բարձր են (տես՝ Ես. 55:8-9): Այսպիսի խաղաղության օրինակ, որ ամեն մարդկային մտքից վեր է, առկա է Պողոսի կյանքում՝ հենց այս գլխում (տես՝ Փիլ. 4:11-13): Աստծո խաղաղությունը չպետք է կապված լինի իրավիճակներից և հաստատ կապված լինի Քրիստոսի անձի և գործի հետ: «Գերազանցել» (*huperechō*) տերմինի համար տես՝ Հատուկ Թեմա. Huper բաղադրյալների կիրառությունը Պողոսի կողմից, Եփես. 1:19-ում:

❖ **«պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը»** Աստծո խաղաղությունը գործում է հավատացյալների կյանքում հսկող գինվորի պես: Այս նույն գեղեցիկ ճշմարտությունը Աստծո կողմից Իր գավակներին պաշտպանելու մասին կարելի է տեսնել 1 Պետ. 1:4,5-ում: Երկու հունարեն տերմինները՝ «սիրտ» (*kardia*) և «միտք» (*nous*) հոմանիշներ են, երբ խոսվում է ամբողջ մարդու էության մասին (գագամունքներն ու միտքը): Պողոսը շեշտադրում է Քրիստոնեական մտածելակերպը իր ամբողջ նամակի բովանդակությամբ: Տե՛ս Փիլ. 3:15-ի գրառումը: Տե՛ս Հատուկ Թեմա. Սիրտ, Կող. 2:2-ում:

❖ **«Քրիստոս Հիսուսով»** Նա է Պողոսի աստվածաբանության կորիզը՝ հիմքը: Աստծուց եկած բոլոր օգուտները և օրհնությունները մարդկությանն են հոսում Հիսուս Քրիստոսի հետ անձնական միաբանության և Նրա կյանքի, ուսմունքների, մահվան, հարության, Երկրորդ Գալստյան միջոցով: Հավատացյալները կենսապես միավորված են Նրա հետ: Սա աստվածաբանորեն համագործ է Հովհաննեսի «բնակվեք իմ մեջ» Հովհաննես 15-ի խոսքին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:8-9**

**<sup>8</sup>Վերջապես, եղբայրներ, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ հարգանքի արժանի է, ինչ որ արդար է, ինչ որ մաքուր է, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բարի համբավ ունի, ինչ առաքինություն և ինչ գովելի բան որ կա, դրանց մասին մտածեցե՛ք: <sup>9</sup>Ինչ սովորեցիք և ընդունեցիք, լսեցիք ու իմ մեջ տեսաք, այն արե՛ք. և խաղաղության Աստվածը ձեզ հետ պիտի լինի:**

**4:8-9** Սա շարունակում է հավատացյալի մտավոր կյանքի թեման: Ռարբիները միտքը դիտարկում էին որպես շնչի համար սերմ ցանելու հող: Մենք դառնում ենք այն, ինչ մտածում ենք: Այս համարները շատ անհրաժեշտ են արևմտյան ժամանակակից եկեղեցու կյանքի համար, երբ հասարակությունը մեր օրերում չարին այսքան տեղ է տալիս: Պողոսի ներկայացրած ցանկը նման է Ստոիկների առաքինությունների ցանկին: Պողոսը հունական փիլիսոփայությանը բացահայտվում է որպես Տարսոսի քաղաքացի: Նա նույնիսկ մեջբերում է մի քանի հույն գրողների (տես՝ Գործք 17:28,

1 Կորնթ. 15:37 և Տիտոս 1:12): Տես Հատուկ Թեմա. Արատներն ու առաքինությունները ՆԿ-ում, Կող. 3:5-ում:

**4:8 «Վերջապես»** Տե՛ս Փիլ. 3:1-ի գրառումը:

❖ **«ճշմարիտ»** Սա ստույգանքը հակասող ճշմարտությունն է, սակայն այն ակադեմիական ճշմարտություն չէ, այլ ավելի շուտ աստվածահանո ապրելակերպ: Այս նույն տերմինը օգտագործվում է Աստծո համար Հռոմ. 3:4-ում:

❖ **«հարգանքի արժանի»** Բառացի սա նշանակում է «արժանապատիվ»: Այս տերմինը հաճախ թարգմանվում է «գերեզման» և կիրառվում է առաջնորդների համար 1 Տիմ. 3:8,11 և Տիտոս 2:2-ում: Այն կարծես թե կիրառվել է «գրավչության» հետ «արժանապատվության» իմաստով՝ թե՛ փրկվածների և թե՛ մեղավորների համար:

❖ **«արդար»** Խոսքը վերաբերում է նրան, ով համապատասխանում է Աստծո բնավորության չափանիշներին, այսինքն բարոյապես շիտակ անձի: ՀԿ-ում «արդար, ճիշտ» բառի երբայերեն տերմինը ծագել է «չափման եղեգից» և որպես չափանիշ նկատի ունենալով Աստծո էությունը, որով դատվելու են բոլոր մարդիկ: Սա չի նշանակում, որ մարդիկ կարող են կատարյալ արդար լինել Աստծո առջև իրենց իսկ ջանքերով, այլ որ Աստված ձրիաբար Քրիստոսի արդարությունն է տվել նրանց, ովքեր հավատում են Նրան: Երբ տրվում է, Աստծո բնավորությունը փոխում է ստացողին:

❖ **«մաքուր»** Սա գործածվել է բարոյական մաքրության իմաստով (տես՝ 1 Հովի. 3:3):

❖ **«գեղեցիկ»** Այս տերմինը ՆԿ-ում կիրառվում է միայն այստեղ: Այն կարծես թե նշանակում է «հաճելի», «սիրալիր», «բարոյացական» կամ «բարեհաճ»: Ահա հավատացյալներին ուղղված ևս մեկ կոչ, որպեսզի գրավիչ կյանքով ապրեն:

<b>NASB</b>	<b>«բարի համբավ»</b>
<b>NKJV</b>	<b>«գովեստի արժանի»</b>
<b>NRSV</b>	<b>«գովելի»</b>
<b>TEV</b>	<b>«արժանի փառքի»</b>
<b>NJB</b>	<b>«հիանալի»</b>

Այս տերմինը ՆԿ-ում կիրառվում է միայն այստեղ: Այն վերաբերում է այն ամենին ինչ «գովեստի արժանի» կամ «գրավիչ» է:

❖ **«երես կա /ինչ/ առաքինություն»** Փիլ. 4:8-ում այս ութ երևույթների ձևերը փոխվում են վեցերորդից հետո և դառնում են առաջին կարգի պայմանական նախադասություն, որը ենթադրվում է որպես ճիշտ: «Գերազանց/առաքինություն» տերմինը Պողոսի թղթերում կիրառվում է միայն այստեղ և միայն երեք անգամ էլ Պետրոսի թղթերում (տես՝ 1 Պետ. 2:9, 2 Պետ. 1:3, 5): Սա վերաբերում է ինչ-որ բան լավ կատարելուն՝ դրան ուղեկցող վերջինիս հեղինակությամբ: Այն տարածված խոսք էր հույն բարոյագետ փիլիսոփաների (Ստոիկների) շրջանում: Այն արտահայտում էր բարություն՝ իր գործնական լիարժեք դրսևորմամբ:

❖ **«գովելի»** Սա նշանակում էր «այն ինչ հավանության էր արժանացել Աստծո և մարդկանց կողմից» (տես՝ Փիլ. 1:11): Սա վերաբերում է մարդկանց դեպի Աստծուն գրավելու համար որևէ մշակույթի կողմից սոցիալապես ընդունված լինելուն (տես՝ 1 Տիմ. 3:2,7,10, 5:7, 6:14):

<b>NASB</b>	<b>«մնացեք այս բաներում»</b>
<b>NKJV</b>	<b>«խորհեք այս բաների վրա»</b>
<b>NRSV</b>	<b>«մտածեք այս բաների շուրջ»</b>

Սա ներկա չեզոք հրամայական է: Այս կոմերցիոն տերմինը (*logizomai*) ենթադրում է հաշվելու գործընթաց կամ մտածել մի բանի մասին, որն առաջնայնություն է և հարատև: Մնալ այս բաներում, որպեսզի դրանք կարողանան ձևավորել ձեր մտածելակերպը և կյանքը (տես գրառում Փիլ. 3:15-ում): Աստված իր բաժինը շնորհքի միջոցով կկատարի հավատացյալների կյանքում, սակայն այն բաները, որոնք գիտեն որ հեռացնում են իրենց սրտերը Տիրոջից, մասնակից լինեն դրանցից ազատվելու գործընթացին (տես՝ 1 Թեսաղ. 5:21-22):

**4:9 «Ինչ սովորեցիք և ընդունեցիք, լսեցիք ու իմ մեջ տեսաք»** Այս բոլոր չորս բայերը անորոշ կատարյալ ներգործական սահմանական են: Սրանք կապ ունեն Փիլիպպեում Պողոսի գործունեության հետ: Թե՛ հավատացյալների աստվածաբանության բովանդակությունը և թե՛ նրանց կյանքը (տես՝ Եզրաս 7:10) կարևոր են, եթե հավատացյալները պետք է արտացոլեն Տիրոջ էությունը և ուրիշներին գրավեն Նրա համար:

Հետաքրքիր է, որ երկրորդ բառը՝ «ընդունեցիք» (*paralambanō*) դարձավ պաշտոնական տերմին «ընդունված ավանդույթի» համար և 1 Կորնթ. 11:23, 15:3-ում Պողոսն օգտագործել է այս իմաստով:

❖ **«տեսել»** Այս շեշտադրությունը սկսել էր Փիլ. 3:17-ում: Ինչպես որ Պողոսը հետևում էր Աստծուն, այնպես էլ հավատացյալները պետք է հետևեն նրան:

❖ **«այն արեք»** Սա ներկա ներգործական հրամայական է՝ «շարունակեք այս բաներն անել»: Միայն լսողներ մի՛ եղեք, այլ կատարողներ (տես՝ Ղուկ. 11:28, Հակ. 1:22): Սա շատ նման է եբրայերենի *Shema* հասկացողությանը (տես՝ 2 Օր. 5:1, 6:4, 9:1, 20:3, 27:9-10), որը նշանակում էր «լսել այնպես, որ կատարես»: Քրիստոնեությունը չպետք է վերածվի դավանանքի, որը մեկուսացված է ամենօրյա աստվածահաճո կյանքից:

❖ **«խաղաղության Աստվածը»** 7-րդ համարը շեշտադրում է խաղաղությունը, որն Աստված է տալիս, իսկ այս համարը շեշտադրում է այդ խաղաղությունը Տվողի հենց էությունը: Խաղաղություն տվող Աստծո վերաբերյալ այս շեշտադրությունը կարելի է տեսնել նաև Հռոմ. 15:33, 16:20, 2 Կորնթ. 13:11, 1 Թեսաղ. 5:23, Եբր. 13:20-ում: Հիսուսը 2 Թեսաղ. 3:16-ում կոչվում է խաղաղության Տեր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:10-14**  
<sup>10</sup>Ես մեծապես ուրախացա Տիրոջով, որ վերջապես իմ հանդեպ ձեր հոգատարությունը վերանորոգվել է, թեև միշտ եք այդպես եղել, բայց առիթ չէիք ունենում: <sup>11</sup>Նյութական կարիքների մասին չեմ խոսում, քանի սովորել եմ գոհ լինել իմ գտնված վիճակից: <sup>12</sup>Գիտեմ չքավորություն կրելը, գիտեմ շատ ունենալն էլ: Ամեն վիճակի մեջ ամեն ինչում սովորել եմ թե՛ կուշտ լինելուն, թե՛ քաղցածությանը, թե՛ շատ ունենալուն և թե՛ զրկանքներ կրելուն: <sup>13</sup>Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ: <sup>14</sup>Համենայն դեպս, լավ արեցիք, որ իմ նեղությանը հաղորդ եղաք:

**4:10 «Ես ուրախացա»** Պողոսն իրոք գնահատում էր այս եկեղեցու օգնությունը (դրամական, հոգատարությունը, աղոթքները, Եպափրոդիտոսը):

- NASB, NRSV «որ հիմա վերջապես իմ հանդեպ ձեր մտահոգությունը վերանորոգվել է»
- NKJV «որ հիմա վերջապես ձեր հոգածությունն իմ հանդեպ թարմացել է»
- TEV «այսքան երկար ժամանակից հետո դուք կրկին հնարավորություն ունեք ձեր հոգատարությունն ինձ ցույց տալու»



Առաջին հայացքից անգլերենում/հայերենում սա կարծես թե բացասական հայտարարություն է: Սա շատ նման է Հռոմ. 1:10-ում արձանագրված արտահայտությանը: «Վերանորոգվել» տերմինը նշանակում է «նորից ծաղկել»: Պողոսը պարզապես ասում է, որ նրանք իրեն օգնելու ցանկություն ունեին, սակայն այդ հնարավորությունը չկար (անկատար ժամանակով է թե՛ բայը և թե՛ Փիլ. 4:10 անորոշը): Հավանաբար սա վերաբերում է դրամական ընծային (տես՝ Փիլ. 4:14): Լավ քննարկման համար տե՛ս Գորդն Ֆիլի, *Ինչի՞ է հանգեցնում բացատրական մեկնությունը*, էջ՝ 282-289:

**4:11 «սովորել եմ գոհ լինել իմ գտնված վիճակից»** Սա անորոշ կատարյալ ժամանակ է, որի մեջ առկա է Ստոիկ մի տերմին (*autarkēs*): Ստոիկ փիլիսոփաներն այս «գոհ լինել» թարգմանված տերմինը գործածում էին որպես իրենց փիլիսոփայության նպատակը, որը կյանքի՝ առօրյա գործերից հանգիստ հեռանալն էր՝ «ինքնագոհությունը»: Պողոսը չէր ասում, որ որ ինքը ինքնագոհ է, այլ որ ինքը Հիսուսին գոհացնող է («Տերոջով», Փիլ. 4:10): Աստծո խաղաղությունը կապ չունի իրավիճակների հետ, այլ Քրիստոսի անձի և գործի հետ: Այս գոհ վիճակը թե՛ Քրիստոնեական աշխարհայացք է և թե՛ Փրկչի հետ փոխհարաբերություն: Քրիստոնեական գոհունակության աստվածաբանական հասկացության մասին կարելի է գտնել նաև 2 Կորնթ. 9:8, 1 Տիմ. 6:6,8, Եբր. 13:5-ում:

**4:12** Այս համարն ունի երեք վաղակատար ժամանակի բայեր և վեց՝ ներկա անորոշներ: Սա իրենից ներկայացնում է մի գեղեցիկ, արվեստագիտական հիմնավորում Աստծո կողմից «Քրիստոսով» Պողոսին ամեն վայրկյան հոգ տանելու հարցում: Տե՛ս Հատուկ Թեմա . Հարստություն, Եփես. 4:28-ում:

❖ **«Գիտեմ չբավորություն կրելը, գիտեմ շատ ունենալն էլ»** Երկու «գիտեմ» բայերը վաղակատար ներգործական սահմանականներ են: Պողոսը գիտեր ինչը չբավորությունը և ինչ է առատությունը: Առաջին տերմինը Փիլ. 2:8-ում թարգմանվում է «խոնարհեցրեց», որտեղ Հիսուսին է վերաբերում: Այստեղ նշանակում է «ամենօրյա կյանքի համար անհրաժեշտից ավելի քիչ»:

Երկրորդ բառը նշանակում է «ավելի քան անհրաժեշտ է ամենօրյա կյանքի համար»: Քրիստոնեական իրենց կյանքում հավատացյալները բախվում են այս երկու վտանգների հետ՝ աղքատությունը և հարստությունը (տես՝ Առակ. 30:7-9): Վտանգն այն է, որ աղքատության մեջ մարդը հուսահատվում է Աստծուց, իսկ հարստության մեջ՝ մարդը դառնում է ինքնագոհ և չի զգում Աստծո կարիքը:

❖ **«բարգավաճում . . . վստահություն»** Տե՛ս Հատուկ Թեմա . Առատություն, Եփես. 1:8-ում:

**NASB, NRSV, TEV  
NKJV  
NJB**

**«ես սովորել եմ գաղտնիքը»  
«ես սովորել եմ»  
«ես այս գաղտնիքի վարպետն եմ»**

Բառացիորեն սա նշանակում է «ես եմ նախաձեռնել»: Սա ևս մեկ վաղակատար կրավորական սահմանական է: Այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է գործածվում: Այն կիրառվում էր առեղծավածային կրոններում այն մարդու համար, որը այդ պաշտամունքի մեջ նախաձեռնող էր: Պողոսը պնդում է, որ սովորել է իր թե՛ փորձառությամբ և թե՛ աստվածաբանությամբ, որ երջանկության իրական գաղտնիքը Քրիստոսի մեջ է, ոչ թե իրավիճակների (տես՝ Հաննա Ուայթհոլ Սմիթի *Քրիստոնյայի Երջանիկ Կյանքի Գաղտնիքը* /Hannah Whithall Smith *The Christian's Secret of a Happy Life*):

**4:13** «Քրիստոս» տերմինը King James Version թարգմանության մեջ այս համարում բացակայում է մի քանի հնագույն հունարեն ձեռագրերում (Ռ\*, A, B կամ D\*): Սակայն «Նրան» դերանունը անշուշտ

վերաբերում է Հիսուսին: Սա Հովհ. 15:5-ում գտնվող ճշմարտության շրջադարձն է: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է գերլարված զույգերով: Սովորաբար զույգերից մեկը շեշտադրում է Աստծո ներգրավվածությունը և մյուսը՝ մարդկության: Ճշմարտությունը ներկայացնելու նմանատիպ արևելյան մեթոդը շատ դժվար է ընկալել Արևմուտքի մարդկանց համար: Հարանվանությունների միջև լարվածություններից շատերը ճշմարտությունը նմանատիպ բարբառային ներկայացմամբ չհասկանալու արդյունք են: Մի կողմի կամ մյուսի վրա կենտրոնանալը նշանակում է բաց թողնել նպատակը: Այս առանձնացված տեքստային ապացույցները աստվածաբանության համակարգի են վերաժվել, որոնք իրականում միայն «կես ճշմարտություններ» են:

❖ **«գորացնում է»** Սա ներկա ներգործական դերբայ է, «մեկը, որ շարունակում է գորացնել» (տես՝ Եփես. 3:16, Կող. 1:11, 1 Տիմ. 1:12, 2 Տիմ. 4:17): Հավատացյալները կարիք ունեն Քրիստոսով գորանալու: Նրանք նույնպես կարիք ունեն ուժեղ լինելու (տես՝ 1 Կորնթ. 16:13, Եփես. 6:10, 2 Տիմ. 2:1): Սա Սուրբ Գրքում այդքան հաճախ հանդիպող պարադոքսալ լարվածությունն է: Քրիստոնեությունը ուխտ է. Աստված նախաձեռնում է այն և թելադրում պայմաններ ու արտոնությունները, սակայն մարդիկ պետք է որոշեն, հնազանդվեն ու շարունակեն: Այս հավատացյալները ներքին և արտաքին ճնշումների տակ էին սուտ վարդապետների և հալածողների կողմից: Ինչպես որ Պողոսը գոհ էր բոլոր իրավիճակներում, այնպես էլ պետք է նրանք գոհ լինեին (մենք նույնպես):

**4:14** Այս հավատացյալները Պողոսի հետ մասնակից էին ավետարանի տարածման գործում (տես՝ Փիլ. 1:5) և դրա հետևանքով եկած հալածանքների մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա. Նեղություն, Եփես. 3:13-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:15-20**  
**<sup>15</sup>Դուք էլ գիտեք, փիլիպպեցիներ, որ ավետարանչության սկզբից, երբ Մակեդոնիայից դուրս եկա, ոչ մի եկեղեցի՝ տալու կամ առնելու հարցում չբաժնեկցեց ինձ հետ՝ բացի ձեզնից, <sup>16</sup>մինչև իսկ մեկ երկու անգամ Թեսաղոնիկե ուղարկեցիք ինձ պետք եղածը: <sup>17</sup>Ո՛չ թե նվեր եմ ուզում, այլ պտուղ եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին: <sup>18</sup>Իրոք, ես ամեն բան ունեմ և առատորեն ունեմ, լցված եմ՝ Եպափրոդիտոսի միջոցով ձեր ուղարկածն ընդունելով, որ անուշահոտ բուրմունք է, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի: <sup>19</sup>Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով: <sup>20</sup>Արդ, Աստծուն՝ մեր Հորը, լինի փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:**

**4:15,16** Սա հասկացվում է որպես 2 Կորնթ. 11:8-9-ի հակասություն, որը ենթադրում է, որ Մակեդոնիայի մյուս եկեղեցիները նույնպես օգնում էին Պողոսին: Սակայն, ժամանակի գործոնը շատ կարևոր է: Պողոսն ասում է, որ հենց այդ պահին ոչ մի ուրիշ եկեղեցի, բացի Փիլիպպեի եկեղեցուց չէր օգնել իրեն: Պողոսը վարանում էր, արդյո՞ք պետք էր ընդունել ֆինանսական օգնություն (տես՝ 1 Կորնթ. 9:4-18, 2 Կորնթ. 11:7-10, 12:13-18, 1 Թեսաղ. 2:5-9 և 2 Կորնթ. 3:7-9):

**4:15 «Դուք էլ գիտեք»** Սա ընդգծված «դուք» է և վաղակատար ներգործական սահմանական: Պողոսն այս եկեղեցու հետ բաժնեկցեց ավետարանը և նրանք էլ փոխհատուցեցին իրեն:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԿԵՂԵՑԻ (EKKLESIA)**  
**SPECIAL TOPIC: CHURCH (EKKLESIA)**  
Այս հունարեն տերմինը՝ *ekklesia*, բաղկացած է երկու բառից՝ «դուրս» և «կանչված» հետևաբար տերմինը ակնարկում է Աստծո կողմից դուրս կանչված մարդկանց: Վաղ եկեղեցին այս տերմինը վերցրեց աշխարհիկ կիրառությունից (տես՝ Գործք 19:32, 39, 41) և Սեպտուագինտայում Իսրայելի «համայնքի» համար այս տերմինի գործածության հիման վրա (*Qahal*, BDB 874, տես՝ Թվոց 16:3, 20:4): Նրանք կիրառում էին այս բառը իրենց համար որպես ՀԿ-ի Աստծո Ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես՝ Հռոմ. 2:28-29, Գաղ. 6:16, 1 Պետ. 2:5,9,

Հայտ.1:6), աշխարհի մասշտաբով Աստծո առաքելության կատարողները (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Ել.19:5-6, Մատթ.28:18-20, Ղուկ.24:46,47, Գործք 1:8, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ) և Միլլարդ Էրիքսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2րդ խմբագրություն, էջ՝ 1052-1053, «Եկեղեցին և Իսրայելը» /Millard Erickson, *Christian Theology*, 2<sup>ed</sup>, pp. 1052-1053, “The Church and Israel”/:

Ավետարաններում և Գործքում այս տերմինը գործածվում է մի քանի իմաստով.

1. քաղաքի աշխարհիկ ժողովը՝ Գործք 19:32, 39, 41
2. Քրիստոսով Աստծո տիեզերական ժողովուրդը՝ Մատթ.16:18 և Եփեսացիներին (այսինքն՝ Եփես. 1:22-23, 3:10,21, 4:4, 5:23, 1 Կորնթ. 10:32, 11:22, 12:28, Կող. 1:18,24, Եբր. 12:23)
3. Քրիստոսով հավատացյալների տեղական համայնքը՝ Մատթ.18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին), Գործք 13:1, Հռոմ. 16:5, 1 Կորնթ. 16:19, Կող. 4:15, Փիլիմոն հ. 2
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը՝ Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը ինչ-որ տարածաշրջանում՝ Գործք 8:3, Գաղ. 1:2 (Հուդան կամ Պաղեստինը):

Եկեղեցին հավաքված մարդիկ են և ոչ թե կառույցը: Հարյուրավոր տարիներ շարունակ եկեղեցաշենքեր գոյություն չեն ունեցել: Հակոբոսում (ամենավաղ գրված գրքերից մեկը) եկեղեցին նշվում է "synagōgē" (ժողովք) տերմինով: Եկեղեցու համար այս տերմինը կիրառված է միայն Հակոբոսի գրքում (տես՝ Հակ. 2:2; 5:14):

**NASB, NKJV, NRSV**  
**TEV**  
**NJB**

**«տալու կամ առնելու հարցում չբաժնեկցեց ինձ հետ»**  
**«չբաժնեկցեց իմ շահերն ու կորուստները»**  
**«ինձ հետ ծախսերի և ստանալու հարցում ընդհանուր հաշիվներ չունեցան»**

Փիլ.4:15-18-ում մի շարք առևտրային տերմիններ կան, որոնք կարող են հաստատվել և սահմանվել Կոյնե Հունարեն պապիրուսներից, որոնք գտնվել են Եգիպտոսում և խեցեգործական արձանագրությունները (կոտրտված խեցիներ, որոնք օգտագործվում էին որպես արձանագրության նյութ): Առաջինը բաց հաշվի համար բանկային տերմին էր:

Պողոսը ճշգրտորեն տեղյակ էր փողի պատճառած խնդիրների մասին: Որպես ռաբբի նրան չէր թույլատրվում իր ուսուցման՝ ուսմունքի համար գումար վերցնել: Կորնթոսում երկպառակությունների կողմից բարձրացրած սուտ մեղադրանքները ստիպեցին նրան, որ եկեղեցիներից ոչ մի դրամական օգնություն չընդունի: Պողոսը պետք է որ յուրահատուկ կերպով հանգիստ զգար իրեն այս եկեղեցու համայնքի հետ:

**4:17 «Ուզում /փնտրում/ եմ...ուզում /փնտրում/»** Սա շատ խիստ հունարեն տերմին է, որը օգտագործվում է երկու անգամ, ցույց տալու Պողոսի երկիմաստ զգացմունքները՝ ընծայի համար շնորհակալության հայտնելով և չնայած դրան, որ նրանցից օգնություն չի ակնկալում: Նա գիտակցում էր, որ նրանք օրհնություն էին ստանալու Աստծուց ավետարանի գործում իրենց սպասավորության և առատաձեռնության համար: Նա ուրախ էր այս բանի համար:

❖ **«այլ պտուղ, որ ավելանա ձեր հաշվին»** Սա ևս մեկ առևտրային փոխաբերություն է, որը վերաբերում է այն շահույթին, որը կուտակվում և ավելանում է մեկի հաշվի վրա: Ավետարանի համար աշխատելու արդյունքում քաղում են ավետարանի օրհնությունները (տես՝ Փիլ. 4:19):

**4:18 «ես ամեն բան առատորեն ունեմ»** Սա ևս մեկ բիզնես տերմին է, որը վերաբերում է վճարման ստացականին: Պողոսը զգում էր, որ այս եկեղեցին ամեն բան, ինչ կարելի էր ակնկալել, արել էր և

նույնիսկ ավելին: («Առատ» կամ «առատություն» տերմինի կիրառությունը և վաղակատար կրավորական սահմանականը նշանակում է «առատորեն մատակարարված»):

❖ **«Եպափրոդիտոս»** Նա Փիլիպպեի եկեղեցու ներկայացուցիչ էր, որն ուղարկվել էր հասցնելու դրամական ընծա և մնալու Պողոսին օգնելու համար (տես՝ Փիլ. 2:25-30):

❖ **«անուշահոտ բուրմունք է, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի»** Սա ծագել է ՀԿ-յան մի փոխաբերությունից, որը գոհասեղանի վրա ընդունելի ողջակեզն էր (տես՝ Ծննդ. 8:21, Ելից 29:18, 25, 41, Ղևտ. 1:9, 13, Եզեկ. 20:41): Նմանատիպ փոխաբերություն Պողոսը կիրառում է 2 Կորնթ. 2:15 և Եփես. 5:2-ում:

Պողոսին տրված օգնությունը, որպես ավետարանի ծառա, իրականում տրվել է Աստծուն և փոխհատուցվելու ու օրհնվելու էր Նրա կողմից:

**4:19 «Իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա»** Սա Աստծուց մի դատարկ բակային ստացական չէ: «Կարիքները» պետք է սահմանել: Սա պետք է դիտարկել հոգևոր նվիրաբերության սկզբունքների համաձայն, որը գտնվում է 2 Կորնթացիների 8 և 9 գլուխներում՝ հատկապես 9:6-15 համարները: Սա այն խոստումներից չէ, որ կարող ենք համատեքստից առանձնացնել և կիրառել մարդկանց բոլոր ցանկությունների համար: Այս համատեքստում այն կապ ունի Պողոսի ծառայության համար մատակարարման հետ: Աստված միշտ կտա այն մարդկանց, ովքեր առատաձեռն տվողներ են, որպեսզի ավելի շատ տան: Սա չի նշանակում, որ նրանք ավելի շատ կունենան անձնական օգտագործման համար, այլ որպեսզի ավելի շատ տան ավետարանի գործի համար:

❖ **«Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով»** Պետք է հիշել, որ ամբողջ գլուխը մոտիվացված է Քրիստոսի գործի միջոցով և որ այդ բոլորը Քրիստոնեական կյանքում կատարվում է Տիրոջ օգնությամբ՝ «Տիրոջով» (տես՝ Փիլ. 4:1, 2, և 4): Աստծո բոլոր օրհնությունները գալիս են Քրիստոսի միջոցով:

**4:20 «Աստծուն՝ մեր Հորը, լինի փառք հավիտյանս հավիտենից»** Սա շատ նման է Պողոսի փակման աղոթքներին, որոնց հանդիպում են մյուս գրքերում: «Հավիտյանս հավիտենից» տերմինը բառացի նշանակում է «դարեդար», որը հունարեն դարձվածք է «հավիտյան» խոսքի համար: Տես Հատուկ Թեմա . Պողոսի փառաբանությունը, աղոթքը և գոհությունը, Եփես. 3:20-ում:

Աստված որպես Հայր նկարագրությունը Աստվածաշնչի ամենահրաշալի ճշմարտություններից մեկն է (տես՝ Ովսեա 11): Աստծո համար ընտանեկան փոխաբերությունների կիրառությունը (Հայր, Որդի) օգնում է մարդկանց հասկանալու Նրա խառնվածքը և բնավորությունը: Աստված հարմարեցնում է Իրեն մարդկային հասկացողությանը՝ կիրառելով մարդկային անուններ, նմանություններ և բացասումներ: «Փառք» բառի ամբողջական գրառման համար տե՛ս Եփես. 1:6-ը:

❖ **«Ամեն»** եբրայերեն «հավատք» կամ «հավատարմություն» բառն է (տես՝ Ամբ. 2:4): Ի սկզբանե այս տերմինը կիրառվում էր նկարագրելու կայուն դիրքորոշումը, վստահ քայլը: Այն սկսեց կիրառվել փոխաբերական իմաստով այն մարդկանց համար, ովքեր հավատարիմ են, հաստատ, հարատև, վստահելի, հուսալի: Հետագայում այն սկսեցին լայնորեն կիրառել վստահելի հայտարարության հաստատման իմաստով: Տես՝ Հատուկ Թեմա Եփես. 3:20-ում:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 4:21-23**

<sup>21</sup>Բարևէք բոլոր սրբերին Քրիստոս Հիսուսով: Ձեզ բարևում են ինձ հետ եղող եղբայրները: <sup>22</sup>Բարևում են ձեզ բոլոր սրբերը, հատկապես նրանք, որ կայսրի տնից են: <sup>23</sup>Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը բոլորիդ հետ լինի: Ամեն:

**4:21-23** Հնարավոր է, որ սա գրվել է հենց Պողոսի ձեռքով, որը դարձել էր ընդունված միջոց հաստատելու իր նամակների վավերականությունը՝ իսկությունը (տես՝ 1 Կորնթ. 16:21, Գաղ. 6:11, Կող. 4:18, 2 Թեսաղ. 3:17, Փիլիմոն 1:19): Սա նաև տարածված գործողություն է Եգիպտոսում գտնված Կոյնե Հունարեն պապիրուսի մեջ: Պողոսի նամակներից շատերը գրվել են դպրի կողմից (տես՝ Հռոմ . 16:22):

**4:21 «Բարևե՛ք ամեն մի սրբի /հայերենում՝ բոլոր սրբերին/»** Սա Նկ-ում միակ տեղն է, որ «սուրբ» բառը կիրառվում է եզակի թվով: Դրան հաջորդում Փիլ. 4:22-ում այս տերմինի հոգնակին: Անգամ Փիլ. 4:21-ը կիրառված է հավաքական իմաստով: Փրկվել նշանակում է ընտանիքի, մարմնի, դաշտի, շինության, ժողովրդի մաս կազմել: Անհնար է լինել հոգևոր «միայնակ ռեյնջեր»: Ավետարանը ընդունվում է անհատապես, սակայն արդյունքը լինում է հավաքական փոխհարաբերությունը:

Չգույշ եղեք անհատի իրավունքների և ազատությունների վրա ժամանակակից արևմտյան խիստ շեշտադրությունից: Քրիստոնեությունը հավաքական փորձառություն է: Անգամ հանրահայտ Բարեփոխման (Լյութերական) կարգախոսները, ինչպես օրինակ՝ «Հավատացյալի Քահանայությունը» սուրբգրային տեսանկյունից ճիշտ չեն: Աստծո ՆԿ-յան ժողովուրդը նկարագրվում է ՀԿ-յան քահանայական արտահայտություններով (տես՝ 1 Պետ. 2:5,9, Հայտն. 1:6): Սակայն ուշադրություն դարձրեք, որ դրանք բոլորն էլ հոգնակի են՝ «քահանաների թագավորություն»:

Հիշեք, որ հավատացյալները անհատապես պարզևներ են ստանում փրկության ժամանակ բոլորի բարիքի համար (տես՝ 1 Կորնթ. 12:7): Մենք փրկվում են ծառայելու: Մեր ժամանակակից մշակությամբ միջավայրը սուրբգրային կենտրոնացումը փոխել է դարձնելով «ի՛նչ կա այստեղ ինձ համար», դրանով փրկությունը ծառայության կյանքի փոխարեն վերածել երկինք տանող տոմսի: Հավատացյալները չեն փրկվում, որպեսզի գործադրեն իրենց ազատությունները առանց ռեալիզացնելու իրենց պոտենցիալը. նրանք փրկվում են մեղքից, որպեսզի ծառայեն Աստծուն (տես՝ Հռոմեացիների 6): Տե՛ս Հատուկ Թեմա . Սրբեր, Կող. 1:2-ում:

**4:22 «հատկապես նրանք, որ կայսրի տնից են»** Սա ակնհայտորեն կապ ունի Հռոմում կառավարության ծառայության մեջ ընդգրկված ծառաներին, ստրուկներին և ցածր պաշտոնյաներին (տես՝ Փիլ. 1:13): Պողոսի ավետարանը նվաճել էր անգամ Կայսրի սեփական անձնակազմին և մի օր մի ամբողջ հեթանոսական համակարգի փլուզման պատճառ էր դառնալու:

**4:23**

**NASB, NRSV, NJB  
NKJV, TEV**

**«ձեր հոգու հետ լինի»  
«բոլորիդ հետ լինի»**

Սա վերաբերում է մարդկային անձին: ՆԿ-ում հաճախ շատ դժվար է հասկանալ հեղինակը նկատի ունի Սուրբ Հոգուն (մեծատառ Հ-ով), թե՛ մարդկային հոգուն, որը մոտիվացված է Սուրբ Հոգով (փոքրատառ հ-ով): Այս համատեքստում ակնհայտ է, որ փոքրատառ հ-ով է:

Պողոսի փակման խոսքում կա ձեռագրային տարբերություն (տես՝ Գաղ. 6:18 և Փիլիմոն 25): Որոշ հունարեն տեքստեր՝ Խ՝, K և Տեքստուս Ռիսեսպոուսը (NKJV) տալիս են «ձեր բոլորի հետ», որը Պողոսի փակման խոսքն է 1 Կորնթ. 16:24, 2 Կորնթ. 13:13, 2 Թեսաղ. 3:18 և Տիտոս 3:15-ում: Հնագույն հունարեն պապիրուսե և ունցիալ ձեռագրերից շատերը տալիս են «ձեր հոգու հետ»:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է այս գլխի գլխավոր արտահայտությունը:
2. Ի՞նչ է նշանակում «հաստատ կանգնել»:
3. Որո՞նք են տեղական եկեղեցում տարածայնությունների լուծման սկզբունքները:
4. Տվե՛ք աղոթքի այն առանձնահատկությունները, որոնք նշվում են 4-7 համարներում:
5. Ձեր սեփական բառերով նկարագրե՛ք 8 և 9 համարների նշանակությունը մեր օրերի համար:
6. Արդյո՞ք 10-րդ համարը Պողոսի կողմից բացասական հայտարարություն է, որպեսզի հանդիմանի փիլիպպեցիներին իրեն չօգնելու համար:
7. Ո՞րն է երջանկության իրական գաղտնիքը, որն արտահայտվում է 11-13 համարներում:
8. Թվարկե՛ք և բացատրե՛ք 15, 17 և 18 համարներում գտնվող երեք առևտրային տերմինները:
9. Բացատրե՛ք, թե ինչպես է համատեքստը ազդում 19ա-ի ճիշտ մեկնության վրա: